ասէ Անտոն, գիտեմ թէ 'ի վանս Հայոց չգտանի դրամ, այլ գրեցից առ վաճառականս Երուսաղէմի և առ ում գտցի ինչ, առաքեսցեն այսր յանուն իմ. 'ի հաճիլ Եպարքոսին այսմ, աճապարեալ Անտոնի գրեալ ազդ արար յԵրուսաղէմ Եպիսկոպոսաց չորիցս անգամ. անպատճառ յղել ըզդրամն, զի անկարելի էր դառնալ Եպարքոսին 'ի բանից իւրոց։ Իսկ միաբանք դեգերեալ այսր անդր աղաչանօք եւ պաղատանօք հազիւ ուրեմն գտին 50,000 դահեկան տոկոսեօք, և առաքեցին առ Անտոն։ Այլ Եպարքոսն ոչ բաւականացեալ այնու՝ ետ կոչել առ ինքն զտեսուչն Ցոպպէի և սպառնացաւ նմա ինքն և Ստեփան Ամիրայն, որ այն ինչ եկեալ էր առ Անտոն 'ի Մատէն աւանէ, փութալ հասուցանել նմա 50,000 դահեկան. զի ահա ասէ Փիլիպպոս ամիրայն դայ յԵրուսաղէմ յուխտ, և է 'ի ճանապարհի բերել ինձ դրամ, առեալ անտի հատուցից ըզպարտս իմ։ Ցայնժամ տեսուչն և Ստեփան Ամիրայն ելին յԵրուսաղէմ, եւ պատմեցին եպիսկոպոսաց զբանս Եպարքոսին, և նոքա իբրեւ խելագար ապշեալ մնացին, զի ոչ գտանէր դրամ 'ի քաղաքին. վերստին ելին դեգերիլ 'ի դրունս, ոմանց ետուն փոխանակագիր հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, և յոմանց տոկոսեօք առեալ, հազիւ ճարեցին և առաքեցին 'ի բանակն։

Իսկ այլազգիք Սիոնի 'ի բերել զբեռինս իւրեանց 'ի Գազայէ՝ 'ի ճանապարհին հասեալ 'ի գիւղն Սէրիզ՝ յափըշտակեցին Արաբացիք զբեռինս նոցա և տարեալ եդին 'ի գիւղն՝ թէ սոքա են Հայոց. այլազգիք Սիոնի եկեալ 'ի դուռն վանաց աղաղակէին և խօսէին բանս անլսելիս. միաբանք ազդ արարին քաղաքապետին անօրինել զգործն, և նա ծանոյց զիրսն Մէհէմմէտ Փաշայի, խոստացաւ եւ նա կարգաւորել զխնդիրն։ Վէճն Արաբացւոց էր այս, որպէս թէ Գատրիարքն և Փոխանորդն Հայոց 'ի գնալ իւրեանց 'ի Ցոպպէ և 'ի դառնալն անտի՝ 'ի ճանապարհին ոչ են տուեալ զսահմանեալ պարգեւս նոցին, և այժըմ խնդրեն զայն։

Կռիւ եւ նեղութիւն այլազգեաց Սիոնի սաստկանայր օր քան զօր, և յաւուր միւսմ եկեալ 'ի դուռն վանաց՝ յետ անարգելոյ՝ գնացին բազմութեամբ 'ի վանս Սուրբ